կազմված է «13» 06. 2017

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է:

«ՎԻՎԱ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
13.06. 2017թ.

Նախագահ _____

ՏՊԱԳՐՎԱԾ Է 2 ՕՐԻՆԱԿԻՑ

ՕՐԻՆԱԿ 2

ԳՐԱՆՑՎԱԾ Է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«23» 06 2017թ.

Գրանցման թիվ 211.171.964232

Հարկ վճարողի հաշվառման համար

00167517

05

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԻՎԱ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2017թ.

կազմված է «13 » 06. 2017

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«ՎԻՎԱ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
13.06. 2017թ.

Նախագահ _____

ՏՊԱԳՐՎԱԾ է 2 ՕՐԻՆԱԿԻՑ

ՕՐԻՆԱԿ ____

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«-------» ----------2017թ.

Գրանցման թիվ _____

Հարկ վճարողի նույնականացման համար

_____

_____

_____

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

---, ---, 2017թ.

Նախագահ _____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԻՎԱ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2017թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՎԻՎԱ» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:
2. Կազմակերպությունը գործում է ՀՀ Սահմանադրության, գործող օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն Կանոնադրության հիման վրա:
3. Կազմակերպությունը գործում է ՀՀ ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում, այդ երկրների օրենսդրությանը համապատասխան:
4. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝
   - օրինականությունը.
   - խտրականության բացառումը.
   - բարեխղճությունը.
   - անդամների շահերի ընդհանրությունը.
   - անդամության կամավորությունը.
   - ինքնակառավարումը.
   - հաշվետվողականությունը:
5. Կազմակերպությունը կարող է անդամակցել միջազգային համապատասխան կազմակերպությունների, ունենալ միջազգային կապեր, կնքել համաձայնագրեր, պայմանագրեր միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ:
6. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը՝ օրենսդրության և իր կանոնադրության համաձայն:
7. Կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:
8. Կազմակերպությունն ունի կնիք, որի վրա շրջանաձև հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով գրված է կազմակերպության անվանումը, իսկ կենտրոնում՝ Կազմակերպության խորհրդանիշը:
9. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է «ՎԻՎԱ» բարեգործական հասարակական կազմակերպություն:

10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, 0012, ք. Երևան, Կոմիտասի պող., 23/3շ., 48 բն.

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կազմակերպության ուշադրության կենտրոնում են.

- դժվարին կացության մեջ գտնվող անձինք
- առողջապահության զարգացում, բուժսպասարկման որակի և մատչելիության բարելավում
- աշխատատեղերի ստեղծում և գործազուրկների վերապատրաստում աշխատանքի տեղավորելու նպատակով
- ծրագրերի ստեղծում և իրականացում առողջապահության, կրթության և գիտության ոլորտներում
- բնակչության իրավագիտակցության բարձրացում
- բնակչության ներգրավում տնտեսական շրջանառության մեջ
- բժշկական հաստատություններ, բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատություններ:

2. Կազմակերպության նպատակներն են.

- քաղաքացիների սոցիալական աջակցություն և պաշտպանություն, ներառյալ հաշմանդամների, գործազուրկների, անապահով խավի նյութական վիճակի բարելավում և նրանց սոցիալական ադապտացիա
- աջակցություն բնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության բարձրացման, ինպես նաև բուժհաստատությունների տեխնիկական հագեցվածության բարելավման գործում
- բուժանձնակազմի որակավորման բարձրացում
- օգնության ցուցաբերում աղետի գոտիներում, տարբեր ընդհարումներում տուժածներին, ինչպես նաև փախստականներին և հարկադիր վերաբնակներին
- տնտեսական զարգացմանն ու լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանն ուղղված նախագծերի նախապատրաստում և աջակցություն
- երեխաների և երիտասարդության հայրենասիրական, հոգեբարոյական դաստիարակման աջակցություն
- աջակցություն բնակչության իրավագիտակցության և դրա հետ կապված իրազեկվածության բարձրացման գործում
- մասնակցություն բնապահպանության գործում
- կամավորական գործունեության խթանում
- բնակչության գիտատեխնիկական, գեղարվեստական և մշակութային զարգացման խթանում
- գիտալուսավորչական գործունեության իրականացում տարբեր ոլորտներում

- սոցիալական բիզնեսի և գովազդի ոլորտում գործունեության ստեղծում և խթանում

3 Կազմակերպության խնդիրներն են.

- բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացում
- մայրության և մանկության աջակցություն
- ցուցաբերվող բուժօգնության որակի բարելավում և մատչելիության բարձրացում
- բուժհաստատությունների հագեցվածության բարձրացում
- կամավորական գործունեության խթանում և զարգացում
- լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը և բիզնեսի զարգացմանը միտված նախագծերի զարգացման աջակցություն և դրանցում անմիջական մասնակցություն
- իրավական մշակույթի բարձրացում և իրավաբանական օգնության իրականացում
- տարբեր միջոցառումների կազմակերպում, որոնք թույլ են տալիս հասնել դրված նպատակներին

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- Իր խնդիրների իրականացման համար միջոցներ գոյացնելու նպատակով կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով, կարող է կազմակերպել տարբեր բնույթի և ծավալի միջոցառումներ, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ՝ արտերկրում:
- Կազմակերպությունը կարող է օրենքով սահմանված կարգով ստեղծել տնտեսական ընկերություններ և նրանց միջոցով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, որից ստացված եկամուտները կուղղվեն կազմակերպության նպատակներին:
- Իր նպատակների և խնդիրների իրականացման համար կազմակերպությունը կարող է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:
- Կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների անհատական գործունեության համար:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ: ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ Կազմակերպության նպատակներին ու գործունեությանը համակրող, Կազմակերպության գործունեությանն աջակցելու պատրաստակամություն ունեցող, Կազմակերպության կանոնադրության դրույթները ընդունող, 18 տարին լրացած ֆիզիկական անձինք, ինչպես նաև հասարակական

կազմակերպության անդամ դառնալու իրավունք ունեցող ցանկացած իրավաբանական անձ: Կազմակերպությանն անդամակցելու ցանկության մասին դիմումը (իրավաբանական անձի դեպքում՝ իր իրավասու մարմնի որոշումը) ներկայացվում է Կազմակերպության քարտուղարին:

2. Կազմակերպության անդամի ընդունելության մասին որոշումը կայացնում է Կազմակերպության նախագահը՝ քարտուղարի առաջարկությամբ:

3. Կազմակերպության անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի (իրավաբանական անձի դեպքում՝ իր իրավասու մարմնի որոշման) կամ Կազմակերպության նախագահի՝ տվյալ անդամին Կազմակերպության անդամությունից զրկելու մասին որոշման հիման վրա:

4. Կազմակերպության անդամին Կազմակերպության անդամությունից զրկելու մասին որոշման հիմք կարող են հանդիսանալ.

- Կազմակերպության անդամի կողմից իր պարտականությունները չկատարելը.
- Կազմակերպության անդամի կողմից Կազմակերպության կանոնադրությանն ու նպատակներին հակասող գործողություններ կատարելը:

5. Կազմակերպության անդամությունից դուրս եկած անձը Կազմակերպությունում վերաանդամագրվում է ընդհանուր հիմունքներով:

6. Կազմակերպության անդամն իրավունք ունի.

- ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում.
- ներկա լինելու Համագումարին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին.
- խորհրդի համաձայնությամբ անվճար օգտվելու նրա ծառայություններից.
- ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.
- բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները՝ ըստ վերադասության, կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով:
- կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների

աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին.

- իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

7. Կազմակերպության անդամը պարտավոր է.

- հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին,
- մասնակցել Կազմակերպության աշխատանքներին,
- կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,
- բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները:

8. Կազմակերպության անդամը Կազմակերպության սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

5.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպությունը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

- իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.
- բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.
- ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից.
- ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.
- տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին.
- կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.
- օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.
- համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն

կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

- կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

9. Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն, ռուսերեն, անգլերեն անվանումներով կլոր կնիք՝ իր խորհրդանիշով, ունի դրոշմ, հաշվարկային հաշիվ Հայաստանի և այլ երկրների բանկերում, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:

10. Օրենքով կարող են նախատեսվել կազմակերպության նաև այլ իրավունքներ:

11. Կազմակերպությունը պարտավոր է՝

- վարել իր անդամների և կամավորների հաշվառումը.
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի.
- պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Գործակալությանը.
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.
- Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, Համագումարի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը.
- Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել Գործակալություն.

- իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.
- կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

5. Օրենքով կարող են նախատեսվել կազմակերպության նաեւ այլ պարտականություններ:
6. Անօրինական գործունեություն ծավալելու համար կազմակերպությունը եւ նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Կազմակերպության ղեկավար մարմիններն են.
   - Համագումարը,
   - Կազմակերպության նախագահը,
   - Կազմակերպության քարտուղարը,
   - Կազմակերպության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),
   - Խորհրդի նախագահը:
2. Կազմակերպության վերահսկողություն իրականացնող մարմինն է վերստուգողը:
3. Համագումարի որոշմամբ կարող են ստեղծվել Կազմակերպությանը կից այլ բաժիններ և հանձնաժողովներ;
4. Կազմակերպության գործունեության և կառավարման վերաբերյալ ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Կազմակերպության Համագումարին:
5. Կազմակերպության համագումարը.
   - նրա բոլոր անդամների ընդհանուր ժողովն է,
   - հրավիրվում է 2 (երկու) տարին մեկ անգամ:
6. Կազմակերպության համագումարը իրավասու է՝
   - կատարելու Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը.
   - ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին.

- որոշումներ ընդունելու Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.
- հաստատելու Կազմակերպության կառուցվածքը.
- ընտրելու Կազմակերպության գործադիր մարմին.
- որոշումներ ընդունելու Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված մարմինների կազմավորման, ընտրության (նշանակման) կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին.
- կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանելու վարձատրության կարգը և պայմանները.
- ընտրելու Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե համաձայն օրենքի՝ Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի.
- հաստատելու Կազմակերպության ռազմավարությունը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն.
- երկու տարին մեկ հաստատելու գործադիր մարմնի կողմից Համագումարի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռը.
- դադարեցնելու Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը.
- ընդունելու որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին.
- ընդունելու որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի.

7. Կազմակերպության Համագումարը հրավիրում, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է կազմակերպության նախագահը:

8. Կազմակերպության Համագումարի արտահերթ նիստ հրավիրվում է նախագահի, Վերստուգողի կամ Կազմակերպության անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված գրավոր պահանջով:

9. Համագումարի հրավիրման օրը և նախնական օրակարգը Համագումարի մասնակիցներին հաղորդվում է հրավիրման օրվանից առնվազն 14 օր առաջ:

10. Համագումարի բացառիկ իրավասության հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել

կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների թվի կեսից ավելին:

11. Համագումարը իրավազոր է, եթե հրավիրվել է Կանոնադրությամբ սահմանված կարգով և դրան ներկա են Կազմակերպության անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

12. Համագումարի աշխատանքներին կարող են ներկա գտնվել նաև Կազմակերպության անդամ չհանդիսացող անձինք՝ դիտորդի կարգավիճակով:

13. Կազմակերպության գործադիր մարմինը՝ նախագահը, ընտրվում է համագումարի կողմից երկու տարի ժամկետով:

14. Կազմակերպության նախագահ կարող է ընտրվել Կազմակերպության այն անդամը, ով բարեխղճորեն կատարել է սույն կանոնադրության պահանջները, դրսևորել բարձր կարգապահություն: Կազմակերպության նախագահի թեկնածությունն առաջադրվում է առաջարկման սկզբունքով, առանց ինքնառաջադրման:

15. Կազմակերպության գործադիր մարմինը՝ նախագահը .

- ապահովում է Համագումարի և խորհրդի որոշումների կատարումը,
- ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
- հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը.
- հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները.
- առնվազն երկու տարին մեկ անգամ հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները և ներկայացնում է Համագումարի հաստատմանը,
- տնօրինում է Կազմակերպության գույքը և ֆինանսական միջոցները՝ մինչև մեկ միլիոն ՀՀ դրամ արժողության գույքը ինքնուրույն, մեկ միլիոն ՀՀ դրամը գերազանցողը՝ խորհրդի համաձայնությամբ,
- պատասխանատու է Կազմակերպության գործունեության համար,
- վերահսկում է Համագումարի կողմից ընդունված որոշումների իրականացումը,
- ինքնուրույն կայացնում է որոշումներ՝ օրենքի և սույն կանոնադրության սահմաններում,
- որոշումների իրականացումը հանձնարարում է Կազմակերպության որևէ անդամի, անդամների կամ մարմինների, բացի Համագումարից և վերստուգողից,
- որոշումներ է ընդունում Կազմակերպության անդամների ընդունելության և Կազմակերպությունից հեռացման մասին,
- արձակում է հրամաններ, տալիս լիազորագրեր,

- ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի,
- հաստատում կամ չեղյալ է հայտարարում Կազմակերպության խորհրդի կամ այլ մարմինների ընդունած որոշումները՝ բացի Համագումարի և վերստուգողի որոշումներից,
- հրավիրում է Խորհրդի արտահերթ նիստեր,
- առաջարկներ է ներկայացնում Խորհրդի քննարկմանը, սահմանում ժամկետ այդ քննարկման համար,
- կնքում գործարքներ, ստորագրում պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ,
- սահմանում անդամավճարի չափը և գանձման կարգը,
- Կազմակերպության նախագահը որոշումներ է ընդունում միանձնյա:
- ընտրվում է Համագումարի կողմից 2 (երկու) տարի ժամկետով:

16. Կազմակերպության քարտուղարը.
- ընտրվում է Համագումարի կողմից 2 (երկու) տարի ժամկետով,
- կազմակերպում է Կազմակերպության ողջ գործավարությունը, անդամավճարների գանձումը, Կազմակերպության անդամների հաշվառումը,
- քննարկում և նախագահի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության անդամ դառնալու դիմումները,
- կատարում է Կազմակերպության նախագահի կողմից տրված այլ հանձնարարություններ:

15. Կազմակերպության խորհրդում ընդգրկված են Խորհրդի նախագահը, Խորհրդին կից բոլոր հանձնաժողովների ղեկավարները, մասնաճյուղերի ղեկավարները՝ դրանց առկայության դեպքում:

16. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության նախագահի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Խորհրդի երկու անդամների կամ Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի (վերահսկիչի) պահանջով:

17. Կազմակերպության խորհուրդը ընտրվում է համագումարի կողմից երկու տարի ժամկետով՝
- իրականացնում է Կազմակերպության կանոնադրական դրույթներով նախատեսված գործունեությունը,
- մշակում և հաստատում է գործողությունների ժամկետային ծրագրերը,
- կատարում է Խորհրդի ղեկավարի և Կազմակերպության նախագահի հանձնարարությունները,
- քննարկում է Կազմակերպության ծրագրային, կանոնադրական դրույթները, ներկայացնում առաջարկություններ դրանցում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին,
- կազմում և Համագումարի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության երկամյա գործողությունների

ծրագիրը և կատարված աշխատանքի մասին հաշվետվությունները,

- քննարկում և նախագահի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության հիմնական միջոցառումների առաջիկա ծրագիրը:

18. Կազմակերպության խորհրդի նիստում որոշումները կայացվում են քվեարկության միջոցով: Որոշումը համարվում է ընդունված, եթե դրան կողմ է քվեարկել նիստի մասնակիցների կեսից ավելին:

19. Խորհրդի նիստն իրավասու է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե դրան ներկա է Խորհրդի անդամների կեսից ավելին:

20. Կազմակերպության խորհրդի նախագահը՝

- ի պաշտոնե Կազմակերպության նախագահի առաջին տեղակալն է,
- ընտրվում է Համագումարի կողմից՝ 2 (երկու) տարի ժամկետով,
- Կազմակերպության նախագահի հրաժարականի, բացակայության կամ նրա կողմից լիազորվելու դեպքում ժամանակավորապես ղեկավարում է Կազմակերպությունը
- հրավիրում և վարում է Խորհրդի նիստերը.
- հրավիրում է Խորհրդի արտահերթ նիստեր,
- իրականացնում է վերահսկողություն Խորհրդին կից բոլոր հանձնաժողովների նկատմամբ,
- հաստատում է Խորհրդի կողմից ընդունված որոշումները:

21. Կազմակերպության խորհրդին կից յուրաքանչյուր հանձնաժողով

- ունի հանձնաժողովի ղեկավար և անդամներ,
- իրականացնում է համապատասխան գործունեություն՝ համաձայն Խորհրդի որոշման,
- քննարկում է իրեն տրված հանձնարարության կատարման մեթոդները և ձեռնամուխ լինում դրանց կատարմանը,
- համագործակցում է Կազմակերպության մյուս հանձնաժողովների հետ,
- կատարում է Խորհրդի որոշումներն ու հանձնարարությունները:

22. Կազմակերպության վերստուգողը.

- ընտրվում է Համագումարի կողմից 2 (երկու) տարի ժամկետով,
- իրականացնում է Կազմակերպության ֆինանսատնտեսական ընդհանուր վերահսկողությունը,
- կարող է պահանջել և ստանալ կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած ֆինանսատնտեսական տեղեկություններ,

- կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ է ներկայացնում կազմակերպության մարմիններին,
- բացառիկ դեպքերում կարող է հրավիրել Կազմակերպության արտահերթ համագումար,
- հաշվետվություն է ներկայացնում Համագումարին կազմակերպության գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ստուգման արդյունքների մասին,
- իրականացնում է Կազմակերպության կանոնադրությունից կամ Համագումարի որոշումներից բխող այլ լիազորություններ,
- Վերստուգողը որոշումներ է ընդունում միանձնյա,
- Վերստուգողը իրավասու է տարին մեկ անցկացնելու կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,
- ծանոթանալու կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել կազմակերպության մարմիններին,
- պահանջելու և ստանալու կազմակերպության գործունեության մասին տեղեկություններ,
- իրականացնելու համագումարի որոշմամբ ,
- Համագումարի որոշմամբ կարող է ստեղծվել վերստուգիչ հանձնաժողով, որն իրականացնում է սույն կանոնադրությամբ Վերստուգողին վերապահված լիազորությունները:

Վերստուգիչ հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե նիստին մասնակցում են անդամների առնվազն 2/3-ը: Վերստուգիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վերստուգիչ հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

2. Եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները), ապա Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Կազմակերպության սեփականությունը գոյանում է անդամավճարներից, դրամաշնորհներից, նվիրատվություններից, սահմանված կարգով իրականացված գործունեությունից եւ օրենքով չարգելված այլ, այդ թվում՝ օտարերկրյա

աղբյուրներից:

2. Կազմակերպության հիմնադիրների եւ անդամների՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը հանձնած, ինչպես նաեւ այլ աղբյուրներից ստացված գույքը կազմակերպության սեփականությունն է:
3. Կազմակերպությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում եւ տնօրինում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով եւ իր կանոնադրությամբ սահմանված կարգով:
4. Կազմակերպության հիմնադիրները եւ անդամները կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարները) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ իր հիմնադիրների եւ անդամների պարտավորությունների համար:
5. Կազմակերպության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրների եւ անդամների միջև:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Կազմակերպությունն իրավունք ունի Օրենսդրությանը համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ) և հիմնարկներ:
2. Կազմակերպության կողմից օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումն իրականացվում է այդ երկրների օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
3. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկներն իրավաբանական անձինք չեն ու գործում են Կազմակերպության հաստատած կանոնադրությունների հիման վրա:

   Կազմակերպության առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի անվանումը պետք է պարունակի Կազմակերպության անվանումը:
4. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների գույքը տրամադրվում է Կազմակերպության կողմից: Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների գույքի արժեքն արտացոլվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Կազմակերպության հաշվեկշռում և համարվում է Կազմակերպության սեփականությունը:
5. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Կազմակերպության կողմից ու գործում են նրա լիազորագրի հիման վրա:
6. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների պարտավորությունների համար գույքային

պատասխանատվություն է կրում Կազմակերպությանը:

7. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները ստեղծված են համարվում համապատասխան որոշման ընդունման պահից:
8. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները ենթակա են հաշվառման Օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել և լուծարվել Համագումարի որոշմամբ կամ դատական կարգով:
2. Կազմակերպության վերակազմակերպումը կամ լուծարումը կարող է իրականացվել նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել հասարակական միավորման որևէ այլ կազմակերպական-իրավական տեսակի կամ հիմնադրամի: Կազմակերպության (կազմակերպությունների) վերակազմակերպման հետևանքով նրանց կանոնադրությունների փոփոխությունները և (կամ) լրացումները կամ գործունեության դադարումը, ինչպես նաև նոր ստեղծված իրավաբանական անձինք պետական գրանցում են ստանում օրենքով սահմանված կարգով:
3. Համագումարը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգը և ժամկետները:
4. Կազմակերպության հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ պետական լիազորված մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում: Կազմակերպության լուծարման պետական գրանցումն իրականացվում է իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգով:
5. Համագումարը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգը և ժամկետները: Կազմակերպության լուծարման դեպքում լուծարային հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց և պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Համագումարի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացման համար, դրա անհնարինության դեպքում փոխանցում է պետական բյուջե: